

ՀՀ վիճակագրական կոմիտեում պահանջվում է

Աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների վերլուծաբան

Աշխատանքային պարտականություններ.

1. Իրականացնել աշխատուժի հետազոտության ընտրանքը, անհրաժեշտության դեպքում նաև՝ պահուստային հասցեների ընտրանքը,
2. Ապահովել բաց թողնված տվյալների պայմանական վերականգնումը (missing value imputation)
3. Հաշվարկել ընտրանքային կշիռներ, ապահովել կշիռների ճշգրտումը (non-response adjustments, calibration of sampling weights)
4. Հաշվարկել չպատասխանելիության և ծածկույթի մակարդակներ (non-response rate, coverage rate)
5. Հաշվարկել հետազոտության տվյալների ճշգրտությունը, վավերականությունը, արժանահավատությունը (survey data accuracy, validity and reliability)
6. Վերլուծել տվյալները, փոխակերպել անհրաժեշտ ցուցանիշների և աղյուսակավորել
7. Հաշվարկել սեզոնային ճշգրտված ցուցանիշներ (seasonal adjustment and calculating seasonal indices)
8. Կառավարել ծրագրերը (տվյալների ներմուծման, ընտրանքի) և միկրոտվյալների բազաները, սահմանված կարգով տարածել, արխիվացնել միկրոտվյալների բազաները,
9. Փաստաթղթավորել գործընթացները՝ նկարագրել հետազոտության տվյալների աղբյուրը, ընտրանքը, կշիռների հաշվարկն ու ճշգրտումը, տվյալների բազայի ստուգումը՝ ըստ ստանդարտի,
10. Մեթոդաբանական կամ այլ փոփոխությունների դեպքում՝ մշակել, արդիականացնել հետազոտության ծրագրերը, ներմուծված տվյալների թվաբանական, տրամաբանական անհամապատասխանությունների, բացթողումների կանխման և ցուցանիշների հաշվարկման ալգորիթմները, ինչպես նաև՝ գործընթացների նկարագրությունը:

Անհրաժեշտ գիտելիքներ.

- Մասնագիտական կրթության առնվազն բակալավրի աստիճան, նախընտրելի է վիճակագրություն / տնտեսագիտություն, տվյալների վերլուծություն, ակտուարական մաթեմատիկա, մաթ. մոդելավորում կամ հարակից մասնագիտությամբ.
- Visual Basic / C++ կամ այլ ծրագրային լեզվի իմացություն.
- Վիճակագրական վերլուծական STATA / SPSS / R ծրագրերով աշխատելու փորձ.
- Տվյալների վերլուծաբանի (տնտեսական, մակրոտնտեսական, ժողովրդագրական) կամ հարակից մասնագիտությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ.
- Ընտրանքի ձևավորման, կշիռների հաշվման առնվազն 1 տարվա փորձառություն
- Հետազոտության գործիքներն ու տվյալների բազաները վերլուծելու և ծրագրային լուծման առաջարկություններ ներկայացնելու ունակություն.
- Օտարալեզու մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն.

- Գիտելիքները կատարելագործելու և գործնականում կիրառելու ցանկություն
- Մեծածավալ տվյալների բազայի հետ աշխատելու և կառավարելու փորձառություն:

Անհրաժեշտ հմտություններ.

- Նվիրվածություն, սրտացավություն, աշխատասիրություն, բարձր պատասխանատվություն, օպերատիվություն
- Բարեկրթություն, նախաձեռնողականություն
- Դժվարին իրավիճակներում խնդիրներ լուծելու կարողություն
- Գրավոր և բանավոր հաղորդակցության լավ հմտություններ
- Հնարավոր ռիսկերը գնահատելու ունակություն.
- Թիմում աշխատելու կարողություն:

Հիմնական աշխատավարձը՝ 244 600 (ներառյալ հարկեր) ՀՀ դրամ է:

Հավելյալ տեղեկատվություն

Հետաքրքրված անձինք իրենց ինքնակենսագրությունը (CV) կարող են ուղարկել itdepartment@armstat.am; kalantaryan@armstat.am էլ. հասցեներին:

Օգտակար հղումներ.

- «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019» վիճակագրական ժողովածու
<https://www.armstat.am/am/?nid=82&id=2226>
- Labour force survey (LFS) - sampling design, sample size and sampling errors
[https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Labour_force_survey_\(LFS\)_-_sampling_design,_sample_size_and_sampling_errors.](https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Labour_force_survey_(LFS)_-_sampling_design,_sample_size_and_sampling_errors)

Հասցե՝ 0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3